## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Ողջունելով Վրաստանի նախագահի եւ նրան ուղեկցող պատվիրակության այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց երկու երկրների միջեւ առկա համագործակցության առիթով եւ շեշտեց, որ նման փոխայցելություններն ավելի են նպաստում երկու ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների զորացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց միեւնույն տարածաշրջանում կողք կողքի ապրող երկու հավատակից ժողովուրդների փոխադարձ զորակցության եւ եղբայրության ամրապնդման կարեւորությունը, ինչին մշտապես ուղղված են եղել Հայ Եկեղեցու ջանքերը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Վրաստանի հայ համայնքին եւ նրա պատմական ու ներկայիս մեծ ներդրումին եւ դերակատարությանը երկրի տնտեսական, մշակութային, կրթական եւ այլ բնագավառներում: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Վիրահայոց թեմի եւ հայ համայնքի եկեղեցական հարցերի կարգավորման ուղղությամբ վերջին շրջանում սկսված դրական գործընթացների կապակցությամբ եւ վստահություն արտահայտեց, որ դրանք կառաջնորդեն հայորդիների հոգեւոր կյանքի խնդիրների ամբողջական լուծմանը:

Վերջում Նորին Սրբությունն արդյունավոր գործունեություն մաղթեց պարոն Գիորգի Մարգվելաշվիլիին՝ ի բարօրություն Վրաստանի եւ նրա հավատավոր ժողովրդի:

Հանդիպումից հետո Վրաստանի նախագահն այցելեց նաեւ Մայր Տաճար, եղավ Տաճարի ավանդատուն-թանգարանում:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Իտալիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջովաննի Ռիչուլլիին:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ջ. Ռիչուլլիին



Վրաստանի նախագահ Գ. Մարգվելաշվիլին Մայր Աթոռում

Ողջունելով դեսպանին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Հայաստանի եւ Իտալիայի միջեւ առկա սերտ փոխգործակցության համար: Այնուհետեւ անդրադարձ կատարվեց Մայր Աթոռի եւ Վատիկանի ջերմ հարաբերություններին, ինչպես նաեւ Իտալիայի դեսպանատան հետ Մայր Աթոռի արդյունավետ համագործակցությանը:

Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց, որ այդ սերտ կապերի շնորհիվ Հայ Եկեղեցու մի շարք հոգեւորականներ իրենց ուսումն են շարունակել Արեւմուտքի, այդ թվում նաեւ Հռոմի աստվածաբանական բարձրագույն հաստատություններում:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ երիտասարդ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում Եկեղեցու կարեւոր դերակատարության մասին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Հայաստանում իր առաքելության մեջ արդյունավոր գործունեություն մաղթեց դեսպանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ